

Զօրէն փշոց գրեզ հեղձնուլ ՚ի սնտուխ,
Տարան գրեզ յեթեր կապոյտ Եղիւսեայն
Ի յարգգողն անդ ատեղցն ՚ի շար Արծաթեայ .
Յաւերժ սիրուն ամբիժ դու կոյս Մարիամիկ
Թռեար ՚ի գիրկս որ շատ կուսեց անմեղիկ
Խընամակալ ու Աստուածորդայն եղեւ մար .
Խնդրէ յորդայն թեւատարած ամս յամայր
Որ ակն յերկիր ածէ ՚ի կոյս իւր գըլթոգ
Մըխթիթարեւ զքս ծընողս իրնամոտ
Խնդրէ նա եւ եղբոր և քիւրցդ արեւ շատ
Որ քս զոսկերս լային թացին խանդղատ .

Մեարտր .

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Ամսոյ 6 ին , տեղւոյս Կառավարիւ
Յօսպէ գնաց , այն տեղի համար Գալ
մագամ ընտրելու , և 9 ին վերագար-
ձու :

— 8 ին , երեկոյեան Ժամը 10 ին քս
ղաքս հասաւ տեղւոյս դատաւոր Մու-
համմէտ Խէյրուլլահ Էֆէնտին . որում
ընդ առաջ դիմաւորելու փութացեր
էին վանօրէից թարգմանք հանդերձ
պահալօք (եասախճի) Կառավարու-
թեան կողմէն Հազարապետ մի զապ-
թիէնտով :

— Ռամադայի Յոյնք իրենց միաբու-
նութեան հետ հաշտուեցան :

— Բ . Դռնէն եկած հրամանին հա-
մեմատ Կառավարութիւնը սկսաւ աշ-
տուհետեւ Բամազանի օրերը ցերեկ
ները տեսնել դատերը , քանցի ասկէ
յառաջ գիշերները կը տեսնէր :

— Աշնան ամսերը թէպէտ մեր երկ-
նից կապուտակ կամարի վերայ կը սա-
հին , բայց քաղաքիս մէջ տակաւին
անձրեւ չեկաւ , իսկ չքանկայքը կը լը-
սեմք որ առատ անձրեւ եկած է . մինչ
զիւ Երուսաղէմի արեւելեան կողմը եր-
կու փոքր տղայք հեղեղի յորձանաց
զոհ եղած են :

Ամսոյ 22 ին քաղաքիս Գերմանիոյ
Կայսրութեան Հիւպատոսարանի Ա-
ւագ թարգման և քարտուղար Հայ-
աղգի Մեծ . Պ . Սրապիտն Յ . Մու-
րատեան , Սաքսօնիայի Մեծ դքսա-
կան սպիտակ բաղէի կարգի , ասպե-
տական երկրորդ աստիճանի չքա-
նչանք ընդունեց :